



**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ  
ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԵՂՏԱԶՐԵՐԻ  
ՀԵՌԱՑՄԱՆ ԿՈԼԵԿՏՈՐԻ ԵՎ  
ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆԻ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ  
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ**

**Երկիր** Հայաստանի Հանրապետություն  
**Պատվիրատու** Փարաքարի «Բարեկարգում» տնօրինություն  
**Ժամկետ** Մարտ – Հունիս, 2010թ.

**Ծրագրի և կատարված ծառայության համառոտ նկարագիր**

Ծրագրի շրջանակներում կատարվել է Փարաքար համայնքի ջրահեռացման համակարգի ուսումնասիրություն, կենցաղային կեղտաջրերի մաքրման կայանի տեղի և մաքրման տեխնոլոգիական գործընթացի ընտրություն և աշխատանքային նախագծի մշակում: Մասնավորապես.

- Ջրահեռացման կոլեկտորի ուղեգծի ընտրություն և հիդրավլիկական ու տեխնոլոգիական հաշվարկների կատարում,
- Ճաղավանդակի հորի և խորքային պոմպակայանի նախագծում, խորասուզված պոմպերի ընտրություն, դրանց աշխատանքի ավտոմատ կառավարման համակարգի նախագծում,
- Օդամղման կայանի և օդի բաշխման համակարգի նախագծում ու օդամղիչների ընտրություն,
- կենսաբանական մաքրման տեխնոլոգիական գործընթացի ընտրություն, որի արդյունքում առաջարկվել է արհեստական օդավորմամբ կենսաբանական լճակներում կեղտաջրի մաքրման տեխնոլոգիան,
- կեղտաջրի մաքրման կառուցվածքների՝ օդավորվող կենսաբանական լճակի տեխնոլոգիական հաշվարկների կատարում, կառուցվածքների աշխատանքային գծագրերի ու առանձին հանգույցների մշակում,
- Բնապահպանական ու սոցիալական ուսումնասիրությունների կատարում և գնահատում,
- ՇՄԱԳ և ՇՄԿՊ մշակում, որը ներառում է հետևյալ 3 փուլերը.
  - ✓ Մեղմացման միջոցառումների ներկայացում,
  - ✓ Մոնիտորինգ և գնահատում,
  - ✓ Պլանի վերանայում՝ հիմնված մոնիտորինգի և գնահատման արդյունքների վրա:




Մշակված աշխատանքային նախագիծը անցել է քաղաքաշինական և բնապահպանական փորձաքննություն:

Վերոնշյալ նախագծի հիման վրա իրականացվել են շինարարական աշխատանքներ, որոնց արդյունքում հնարավոր է դարձել ապահովել համայնքի կենցաղային կեղտաջրերի կազմակերպված հեռացումը և մաքրումը, իսկ ռոռզման սեզոնին նաև դրանց օգտագործումը ռոռզման նպատակով: Ավարտական փուլում փորձարկվել, գործարկվել և շահագործման են հանձնվել կոյուղատար կոլեկտորն ու մաքրման կառուցվածքները:

Կեղտաջրերի մաքրման ընտրված տեխնոլոգիան ի տարբերություն գոյություն ունեցող «դասական» եղանակի, ունի հետևյալ առավելությունները՝

- Շահագործման տեսանկյունից առավել պարզ է և չի պահանջվում մասնագիտական արհեստավարժ անձնակազմի ներգրավում,
- Ապահովում է էլեկտրաէներգիայի զգալի խնայողություն,
- Մաքրված կեղտաջուրը նախքան ռոռզման առու լցվելը կարող է օգտագործվել այլ նպատակներով (օր. ձկնաբուծության համար),
- Նմանատիպ նախագծերի իրականացման տարածքներում հնարավոր է ժամանցի և հանգստի գոտիների կազմակերպումը, որը թույլ կտա որոշ չափով զարգացնել միջին և մանր բիզնեսը:



**Ծրագրի նպատակը**

Փարաքար համայնքի սանիտարական վիճակի բարելավում, ստորերկրյա ջրերի աղտոտման նվազեցում, դեգրադացված գյուղատնտեսական հողատարածքների վերականգնում, հողատարածքների կայուն օգտագործման ապահովում, բնակչության սննդային անվտանգության ապահովում, նոր հողատարածքների ռոռզման ապահովում: